ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«04» 11 2018թ.
№ ԳՀԱՊՁԲ/9367

«Հելփ Ռ.Վ» ՍՊԸ-ի տնօրեն
Վ. Ավագյանին
Հասցե՝ Ք. Երևան, Կիևյան փ 15, բն. 5
էլ. հասցեն՝ help.pharmacy.LTD@gmail.ru
ՀՎՀՀ՝ 00086033

ՀՀ պաշտպանության նախարարության և «Հելփ Ռ.Վ» ՍՊԸ-ի միջև 30.05.2018թ. կնքված ԳՀԱՊՁԲ-9/22-1 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ նաև Պայմանագիր) համաձայն, ընկերությունը պարտավոր էր 2018թ. 2-4-րդ եռամսյակների ընթացքում մատակարարել 15000 տուփ «Անձեռոցիկ ստերիլ երկշերտ», 10000 տուփ «Անձեռոցիկ թանզիվից, մանրէազերծած երկշերտ» և 15 հատ «Բ-1 վիրակապական հավաքների ստերիլ վիրակապեր», սակայն Պայմանագրով նախատեսված պայմաններին համապատասխան նշված ապրանքների մատակարարում չի իրականացվել, բացի այդ, առկա է Ձեր գրությունը՝ հետագա մատակարարումներն իրականացնելու անհնարինության վերաբերյալ:

Հիմք ընդունելով վերը նշված հանգամանքը և Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի պահանջները՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 02.11.2018թ.-ին մասնակի՝ վերը նշված ապրանքատեսակների մասով, միակողմանի լուծում է ԳՀԱՊՁԲ-9/22-1 ծածկագրով պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «Հելփ Ռ.Վ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 4,590 (չորս հազար հինգ հարյուր ինսուն) ՀՀ դրամ՝ որպես Պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժ:

Միաժամանակ տեղեկացնում եմ, վերոնշյալ ժամկետում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին ենթակա է գանձման 47,355 (քառասունյոթ հազար երեք հարյուր հիսունինգ) ՀՀ դրամ, որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում:

Հարգանքով՝

Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆ

0044, Երևան, Բագրևանդի 5, Հեռ.՝ (+374 10) 29 45 45, Ֆաքս՝ (+371 10) 29 46 13, Էլ.փոստ՝ depart@mil.am
Ереван, Багреванда 5, 0044, Тел: (+374 10) 29 45 45, Факс. (+374 10) 29 46 13, Эл.почта: depart@mil.am
0044, 5 Bagrevans Str., Yerevan, Tel. (+374 10) 29 45 45, Fax: (+374 10) 29 46 13, E-mail: depart@mil.am